Արձանագրություն N 2

«ՀՀ ԼՄՍՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/21» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սպիտակ 10.08.2020թ.
ժ. 11:00

Մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Միրզոյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ադամյան, Ա. Թումանյան, Լ. Սահակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավետիսյան

«ՀՀ ԼՄՍՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում www.armeps.am համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1	«Սոլարա» ՍՊԸ	
2	«ԷՄ-ԷՅ» ՍՊԸ	ք. Սպիտակ, Շահումյան 10 m.melqonyan@mail.ru
3	«ԲԻՈՆԻԿ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ, գ. Դարպաս mariakhachaturyan@tconstruction.am
4	«Դ.Ա.Ն.ՇԻՆ» ՍՊԸ	ք. Սպիտակ, Մուրացան տն.5 ashotdanielyan59@mail.ru
5	«Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ	ք. Լեռնավան, 9փ. 17տ. rafik.sirunyan@mail.ru
6	«ՍՄԱՐԹ ՆԵԹ» ՍՊԸ	ք. Վանաձոր, Շինարարների փ/25/2/1 arev.arev.18@mail.ru
7	«Փյունիկ» ՍՊԸ	ք. Վանաձոր, Թումանյան 6/բ pyunikeu@rambler.ru

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի մեջ գնայատող հանձնաժողովը արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ.

«Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է բաց մրցույթին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված 1), մասնակցի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը, իսկ սարքերի և սարքավորումների նկարագրում (Հավելված 1.1) երաշխիքային ժամկետ է տրված 1 տարի (հրավերով պահանջվում է 3 տարի):

«ՍՄԱՐԹ ՆԵԹ» ՍՊԸ-ի, և «ԲԻՈՆԻԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերի մեջ սարքերի և սարքավորումների նկարագիրը (Հավելված 1.1) լրացված չէ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջներով՝ մասնակիցները սարքերի և սարքավորումների նկարագրերի փոխարեն ներկայացրել են տեխնիկական միջոցների նկարագրեր:

«ԷՄ-ԷՅ» ՍՊԸ-ի և «Դ.Ա.Ն.ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում բացակայում է մասնակցի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 92-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

1" «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

2. Գնահատող հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և մասնակիցներին ծանուցել՝ մինչև նիստի կասեցման ժամկետի ավարտը շտկել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը:

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Հ. Միրզոյան

Անդամներ՝ _____ Ա. Ադամյան

_____ Ա. Թումանյան

_____ Լ. Սահակյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավետիսյան